

Գրական Թերթ

ISSN 1829-1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՆԻՍՏՐԱԿՏԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱՐՎԱԹԱԹԵՐԹ * ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ

ԴԻՏԱՆԿՅՈՒՆ

Ուշադրություն, ՀՀ տարածքից անհետացել է պատասխանատվությունը:

Գեղեցիկ հանգի համար չգրեցի այս դաժանագույն նախադասությունը: Առաջին հայացքից էլ այն համոզիչ չէ՝ գրելիքի թեման մեզ շուրջկալած, արդեն շնչահեղձ անող, երբեմն ոչնչացնող խոսքն է, որ անարգել հորդում է եթերից, մամուլից, սոցիալական ցանցերից... Թվում է՝ հասել ենք հատակին, էլ անկումի տեղ չկա, բայց հերթական խոսքահեղեղը մի նոր վիճ է դառնում՝ ավելի բևեռացնելով առանց այն էլ բարիկաղների բաժանված մեր հասարակությունը: Մեղադրանքներ են, որ թափվում են Ազգային ժողովի ամբիոնից, փողոցային հարցումներից, ու չեն էլ տարբերի՝ լուտանքների որ չափաբաժինն է ազգի ընտրյալին, իսկ որը՝ վերջին անգամ այբբենարան կարդացած պատահական անցորդին:

Հա, նոր բան չասացի, սա է մեր իրականությունը: Բայց ասացի, որպեսզի արդարացնեմ անհետացած պատասխանատվության մասին գրվածը: Ասված խոսքի պատասխանատվության: Գրված բառի պատասխանատվության:

Մեր ժողովրդավարության նվաճումներից մեկն էլ գրաքննության վերացումն է, բայց ներքին գրաքննիչ- որը փոքրիշատե «զպաշապիկ» կիսգցնի ասելիքի վրա ու մանիպուլյացիան հիմնական կովան չի դարձնի, դա էլ չկա: Եվ այս ճակատագրական ժամանակներում, երբ հիբրիդային պատերազմներն ամեն պահ կարող են սասանել մեր փխրուն կայունությունը, նույնիսկ տարրական ինքնապաշտպանական բնագոյն է կորել: Ու վերևից ներքև, աջից ու ձախից, դրսից ու ներսից իր հաղթանակն է տոնում ամենաթողությունը:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ու արտահայտման ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է առանց միջամտության տեղեկատվություն փնտրելու, ստանալու ու տարածելու հնարավորությունը՝ անկախ սահմաններից:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 19

Բայց՝ Գաղափարների ազատ արտահայտման իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է: Յուրաքանչյուր քաղաքացի կարող է խոսել, գրել ու տպագրել ազատորեն, բայց պետք է նաև պատասխանատու լինի նշված իրավունքի՝ օրենքով սահմանված խախտումների համար:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 11

Կարինե ԽՈՒԴԿՅԱՆ

ԳՐՈՂԻ ԽԻՂՃՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Գրողը մենակ է իր ճերմակ թղթի ու հատկապես, հատկապես խղճի առջև: Որքան ուզում է նա իր խղճի հետ խարդավի, փառքի դափնեպսակներ նվաճի, բարձունքներ ճախրի, ժամանակը վրա է հասնում, դափնեպսակները աշնան տերևների պես թոշում, թառամում, թափվում են, ու գրողի խիղճը մերկանում է ժամանակի, հատկապես, հատկապես իր ժողովրդի առջև:

Այդ ժամանակը երբեք չի ուշանում:

Նորեկ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԱՏԱՂ ԻՆԻՄ

Չասեմ սպիտակաս... սև ու սպիտակ (չեք կարծում, որ կարմիրն ու սպիտակը ավելի ընդունելի էր)... ընդամենը մեկ-երկու բառատարածք մղված երբեմնի շքեղաշուք բառապաշար... Նախկին ու ներկա... Ներկա ու նախկին... առանց դադարի... ավելի ու ավելի կատաղի... և սովորաբար թարեզ՝ իջնող-բարձրացող, մարդկանց հարցերն է վեր... զարմանքն է վար... նաև՝ ԵՐԿԻՐ, միայն իրական... և, իբրև ամփոփում՝ կրթությունը նորաձև է... Մնում է հայտարարել նոր թատերաշրջանի բացումը և ծափահարել... բուն ու երկարատև... չդժգոհելով, որ հասարակությունը մենակ է թողել իր մտավորականին... որ հասարակությունը իր գրողին, նկարչին, դերասանին, քանդակագործին ու երգահանին ուղեկցելու մտադրություն չունի... Նրանք միայն խանգարում են, առանց այդ «պարսպ» արաձների ավելի հետաքրքիր է ու հեշտ... Էդ ինչ պիտի ասեն, որ լույսը չքի մեր տները, որ մարդը չկորցնի տեսնելու և լսելու ցանկությունը, մերձավորին սիրելու շնորհը, ներելու կարողությունը... և փառք տա Տիրոջը ամեն ապրած օրվա և մտքի սթափությունից իրեն չզրկելու համար...

...Միթե ժողովրդի փրկածը Բարաբան չէր...

...Պատվիրանները չեն հերիքում... չասեմ ինչքան սեր կար մեր այս ԵՐԿԻՐԻՄ... չասեմ՝ կարոտում եմ մարդուն...

...ցավը կրնակալիս հետևում է մեզ, ամենուր, տարվա բոլոր եղանակներին, օրվա բոլոր ժամերին: Ուր որոշում ենք գնալ, նա այնտեղ կազմ ու պատրաստ սպասում է մեզ: Նա առանց մեզ գոյություն չունի: Ինչ ասեմ, ես ամեն օր սպասում եմ իմ վերադարձին՝ հաճախ մոռանալով օրերի հաշվարկը, հինն ու նորը, նախկինն ու ներկան, սևն ու սպիտակը, բոլոր խաղերից դուրս, սուտիկ խոստումներից հեռու... անտեսելով ջերմությունից փչող ցուրտը...

ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ շարքերն էլ գնալով սովորանում են, բայց բերքը հանդից տուն բերող-ամբարող չկա, էլի բերքն առատ է, մշակը՝ պակաս, անանձնականի տարածքները՝ դատարկ... Իսկ ԵՐԿԻՐԸ՝ անընդհատ կորցրած ու գտած, գտած ու կորցրած, ամեն անգամ ավելի ու ավելի փոքր, ավելի անօգնական... ավելի անպաշտպան...

Վերջարանի փոխարեն. Երբ մենք երեխաներով հավաքվում էինք պապիս տանը ու մեզ խելոք չէինք պահում, կովում, իրար վիրավորում էինք կամ փողոցից բերած բառեր էինք շաղ տալիս տանը, պապս ընդամենը չորս բառից կազմված մի պատիկ նախադասություն էր օգտագործում՝ Մատաղ ինիմ, խելունք կացեք...

Եվ մեզից ոչ մեկը չէր համարձակվում ձայն հանել...

Ալիս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ոչ միայն ներկայիս Հայաստանի, այլև ամբողջ աշխարհի հայ մտավորականությունը երբեք չի քնել, անգամ չի ննջել կամ հորանջել: Ինչպիսիք այն է, թե մեր հասարակությունը ու նաև սրա ակտիվ, եռանդուն հատվածը՝ լրատվությունը ինչ է հասկանում *մարտիրականություն* ասելով: Միթե մտավորական, և այն էլ վառ արտահայտված մտավորական չէ Ռուբեն Գալստյանը, որ իր կյանքն է նվիրել հայ քարտեզագրությանը, հարկ է համարել Լոնդոնից տեղափոխել իր քարտեզների տոննայանոց հավաքածուն, բնակվում է մեր կողքին, օր ու գիշեր անխոնջ թմբկահարում է մեր սահմանների պատմական, իրավական, փաստական նյութերի ու դրանց աղավաղման փորձերի անհեթեթ լինելը: Գուցե մտավորական չէ մեր պատմաբանները, թուրքագետներն ու ադրբեջանագետները, որոնք տարիների տքնաջան աշխատանքով գիտելիքներ են կուտակել, վերլուծություններ են անում, հրամցում հասարակությանն ու իշխանություններին: Մենք նրանց պակասը չենք ունեցել երեկ և այսօր էլ չունենք: Մտավորական չեն մեր քաղաքագետ-վերլուծաբանները, եթե ազնիվ են: Իսկ եթե ազնիվ չենք մեկս մյուսիս հանդեպ, չենք լսում մեկմեկու, ի մի չենք բերում մեր ողջամտությունը, ստացվում է զգվոտոց, միմյանց հնարավոր բոլոր միջոցներով նվաստացնելու մոլուցք... Իսկ ո՞ր մնաց «Ով հայ ժողովուրդ, քո ուժը քո միասնականության մեջ է», մարգարեություն-պատգամը: Չարենցը լավ գիտեր իր ժողովրդի պարտությունների հիմնական պատճառը: Հազարը ունեն ազգայինի բարձր գիտակցություն, մեկը չի գիտակցում, թե ինչ է անում, դավաճանում է, չի արժանանում նույնիսկ Հերոստրատի փառքին, քանի որ քթից այն կողմ էլ չի նայել իր ստոր քայլն անելիս:

Անգրագիտության կամ թերի գիտելիքների տեր մեր գանգահար-լրագրողների կարծիքով՝ *մարտիրական* են հիմնականում արվեստի գործիչները (խոսքը ռաբիսի և սերիալաշինությանը գրադրվածների մասին չէ, իհարկե: Նրանց իրավունքներն անսահմանափակ են, իրենք էլ՝ անմեղսունակ): Հարկ չկա երկարաբանելու, թե գրողի կամ նկարչի, կամ քանդակագործի ու երաժշտի խնդիրը երբեք էլ չի եղել բարիկաղների վրա դրոշ ծածանելով հեղափոխություններ անելը: Աշխարհի քաղաքական ու այլ կարգի պատմական տեղաշարժերը շատ հաճախ հետևանքն են արվեստագետի, փիլիսոփայի շավիղներով, արահետներով ու լայն ճանապարհներով անցածների, նրանցով ոգեշնչվածների գործողությունները: Բաճիկին իր գեղարվեստով ներշնչեց ու առաջ տարավ, մտածողության նոր աստիճանի հասցրեց մի ամբողջ գրագետ հասարակություն: Դե, նրա ժամանակ գրագետը գրագետ էր, տգետը՝ տգետ:

Մարտիրականներ են նաև նրանք, որ մասնակցում են միմյանց դեմ չարախոսելու, մեկմեկու ջնջելու, չզիջելու արշավանքին՝ մեր այս փոքրիկ հողակտորի վրա: Մեկը մեկի մատից փուշ հանելու, խելացի հորդորն ու կարևոր մտքերը ի մի բերելու, սիրելու և սեր քարոզելու, ընդհանուր շահով առաջնորդելու փոխարեն հնտանում ենք սուտերով պար պարելու մեջ:

Սկզբը՝ էջ 1

Ալիս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ի դեպ, մեր հանճարեղ հայրենակցի «Մուսերով պարը», որի տևողությունը երկու րոպե և քսաներկու վայրկյան է, կարծես այսօրվա աշխարհի երաժշտական պատկերը լինի: Մեր հայրենակից մտավորականը հողմապտույտի մեջ միայնակ դեմ սուր ճոճողներին դնում է մի զարմանահրաշ ներդաշնակության մեջ: Այս պարը կարողացել է վայրկյանների մեջ խտացնել տարիներ, դարեր տևող առճակատումները, իսկ սիրող զույգի՝ մի քանի փոքրիկ pas-երով գեղեցիկ պարի անսպասելի միջարկումը պատերազմի և խաղաղության սար ու ձոր տարբերությունն է կարծես: Սակայն պարողների «պատերազմը» դեռ էլի շարունակվում է ու նույնքան անսպասելի ավարտվում: Որքան հեշտ է, ուրեմն, պատերազմների, կոիվների, վեճերի, զգվոտոցների անիմաստությունն ըմբռնելը, երբ կարելի է այսքան բնական ու այսքան միաբան կանգ առնել ու ցած դնել խոլական ու անվերջ թվացող պայքարի մեջ գտնվող սուսերները...

Պատերազմների պատմությունը ցույց է տալիս, որ Արամ Խաչատրյանի հաշվարկը ճշգրիտ է: Ջուր չէ, որ աշխարհը նրա բոլոր հանճարեղ գործերից հենց այս մեկն է ընկալել համերաշխորեն:

Ավաղ, Հայաստան աշխարհի «իրական» նորագյուտ մակդիրը ամենին չի համապատասխանում իր տարողությանը: Այն ավելի շուտ հումանիշն է «այսօրվա» վիրավոր, դեռևս հենակներով քայլող Հայաստանի: Բայց իրական չի կարող լինել երկիրը, եթե հայտնի չէ, թե նա որտեղից, երբ է սերվել և դեպի ուր է ճանապարհվել: Դրա ամենաթարմ օրինակը Ադրբեջանն է: Թեև պատահում է, որ ծնողների մասին ոչ մի պատկերացում չունեցող որբուկն էլ կյանքում գտնում է իր ուղին, բայց նա ավելի շատ ու սիրահոծար է փնտրելու իր արմատները, այլապես չի իմանա, թե ինչ է ապագան, և կգնա քանոն քառ ուղղությամբ: Վերջին բառերը դարձյալ Ադրբեջանին են վերաբերում և՛ ամենին ոչ մեզ՝ հայերիս պատկանող Հայաստանին:

Այսօր մտավորականությունը թեև բառի բուն իմաստով անկյուն քված չէ, մեզ՝ գրողներին, օրինակ, տրված է խոսքի ազատություն: Ինչ ուզում ես գրիր, միևնույնն է, քեզ լսող չի լինելու, քանի որ քո խոսքը ի սկզբանե դատապարտված է լայն լսարան չունենալու, լսարանն էլ՝ քիչ լսելի կամ ընդհանրապես լսելի չլինելու: Այլապես գրողներին, նկարիչներին, երաժիշտներին համատրոնն ինչն են փորձում գրկել իրենց սեփականությունը հանդիսացող շինություններից, որոնք մենք՝ մտավորականներս, տանտիրոջ հոգատարությամբ, արժանապատվորեն ու սիրով խնամել ենք, և որտեղ մեզ մարդ ենք զգացել վերջապես՝ իրական երկրի իրական քաղաքացի:

Հակոբ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

Լեզու իմանալը դեռ երաշխիք չէ ճիշտ, տեղին ու ըմբռնելի խոսք կառուցելու համար, ինչը, անտարակույս, մտածումի արգասիք է: Այս պարզ ճշմարտության անտեսումը հանգեցրել է իրականության մեջ խոսքի արժեզրկմանը, ու ակամայից հարց է առաջանում՝ արդյոք Հայաստանը մեր տունը չէ, հայ ազգը՝ ընտանիքը, որ սրբության սրբոց մեր օջախ-հայրենիքում միայնակ հետ խոսում ենք հասարակաց տան բառապաշարով և կենդանիների բնորոշ բնագոյային մոլուցքով՝ չխորշելով մեր հազարամյակների պատմություն ունեցող ազնվական ինքնության անարգումից: Այսօր, կարծում եմ, կարևորն այս ամենաթողության վիճակը վերահսկելի դարձնելն է, որպեսզի հստակեցվի աշխարհում մեր ներսի ու դրսի (դիվանագիտական) խոսքը, և հանդուրժենք ու ընդունենք, որ մեկ գաղափարի դեպքում էլ չեն կարող գիտնականի, գրողի, ինժեների, ընդհարապես՝ աշխատավորի խոսքը նույն բառերն ու արտահայտչականությունն ունենալ, չէ՞ որ, փառք Աստծո, դեռ հայրենիք ու պետություն ունենք, ինչքան էլ որ աղն ու մատաղը խառնվել են իրար, կիրթն ու անկիրթը նույն մեծ անցքերով ու պատռված մաղով են տեսակավորվում, և լկտին իրեն համարձակ է համարում, անամոթը՝ համեստությամբ չբարդոյթավորված:

Դիանա ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԵՍ ԵՄ

«Ես ես եմ» ասելու և հաստատելու իրավունքը վաստակում են ապրածով ու ստեղծածով:

Մինչդեռ «ես ո՞վ եմ» հարցը ապրողներին գոյաբանական փնտրտուքի առանցքը պիտի լինի, քանի որ պատասխանը հավակնում է մատնացույց անելու մեր տեղն ու դերը աշխարհում, այն երկրում, որին պատկանում ենք, այն պետության մեջ, որի քաղաքացին ենք, այն համայնքում, որի անդամն ենք և, ի վերջո, այն ընտանիքում, որտեղ ապրում ենք:

Երբ գիտես, թե դու ով ես, ուրեմն՝ գիտես, թե ինչ պետք է անես, ինչ իրավունք ունես անելու և, որ ամենակարևորն է, ինչ կարող ես անել:

Այսօր, գուցե նաև երեկ, հաճախ կարելի է լսել այս վիատ հարցը. «Ես ո՞վ եմ, որ մեկին խելք սովորեցնեմ, կամ ես ո՞վ եմ, որ իմ ասածը բանի տեղ անցնի», և այդ վիատությունը վեր է ածվում կատարյալ հուսահատության, երբ հարցնողը գիտի, անպայման գիտի, որ իր

իմացածն ու կարողացածը, որքան էլ արժեքավոր լինեն համայնքի, պետության ու ժողովրդի համար, միևնույնն է, նույնքան անցանկալի են այն մեկի՝ վերադասի կամ աթոռավորի համար, որի կուսակիցը, ընկերը կամ բարեկամը լինելու «բարեբախտությունը» չունի ինքը:

Եվ հենց սա է այն ողբերգությունը, որ ապրում է մարդը, որի խոսքն ու գործը ազնվորեն ու արդարամտորեն կծառայելին պետությանն ու համայնքին, հայրենիքին ու ազգին, եթե տեղ հասնեն, եթե կարևորվեն, եթե ընկալվեն ու գնահատվեն, եթե «իմ ու քո»-ի արանքում չփոշիանային, չարհամարհվեին ու չանտեսվեին, և վատթարագույնը, եթե նա ինքը չպատժվեր (հազար ու մի երևացող ու աներևույթ միջոցներով ու կերպով) հենց այդ խոսքի ու գործի համար, «մերոնքական», անգամ «ձերոնքական» չլինելու համար:

Եվ հիմա՝ հարցը. «Ես ես եմ»:
Եվ պատասխանը. «Ես եմ»:

Միայն թե պատասխանս գրոշ չարժե, երբ Հրանտ Մաթևոսյանի սահմանած՝ երկրի, պետության տերը կարգվելու անհրաժեշտության և անխուսափելիության նշանող ոչ միայն անկասելի գահավիժում է, այլև սպառնում է անհետանալ:

Մանվել ՄԻԿՈՅԱՆ

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՄԻԱՅՆ ՁԵՌՆՏՈՒ Է ՄԵՐ ԹՇՆԱՄՈՒՆ

Երբ ինձ հարցնում են՝ կամ արդյոք Հայաստանում խոսքի ազատություն, ես պատասխանում եմ, որ մեր երկրում խոսքի ամենաթողություն է: Եթե որևէ լրատվամիջոց վարկաբեկիչ, անձը վիրավորող հրապարակում է տարածում, կարելի է դատի տալ, պատիվ պահանջել, որը մեծ մասամբ չի արվում: Իսկ ֆեյսբուքյան դաշտն ընդհանրապես անվերահսկելի է: Ժողովրդի պատակտումը, միայնակ նկատմամբ ատելության խոսք տարածելը միայն ձեռնտու է մեր թշնամուն:

Օրերս մի հաղորդման ժամանակ մտավորականն իր կարծիքն էր արտահայտում երկրի անվտանգության ամրացման, զարգացման, մեր հարևանների հետ դիվանագիտական լուրջ հարաբերությունների մասին՝ բերելով բազմաթիվ փաստարկներ ու ապացույցներ, նշելով գործողությունների հաջորդականությունը: Հաջորդ օրվանից նրա նույն բնագավառի մարդիկ սկսեցին ամենավերջին հայիսանքները տեղալ՝ համարելով այդ լուրջ մտավորականին ազգի թշնամի:

Ով չի հայիոյում, նա հայրենասեր չէ: Միայնակ հայիոյելու, վարկաբեկելու վատ սովորությունը դարձել է սովորական երևույթ: Նույնիսկ վաղեմի ընկերներն են միայնակ հետ գժտվում քաղաքական տարբեր հայացքների համար:

Կա նաև ֆեյսբուքում իրենց բարի և հայրենասեր ձևացնողների մի հսկա բանակ: Եթե նրանք կյանքում էլ այդպիսին լինեին, մենք վաղուց ծովից ծով Հայաստան կունենայինք:

Կան մարդիկ, որ իրենց ողջ տոհմից վերջին 35 տարում ոչ մեկը բանակում չի ծառայել, բայց խոսում են հայրենիքից ու հայրենասիրությունից, որը, մեղմ ասած, անբարոյակալություն է:

Իմ տեսած պոռոտախոս, պարծենկոտ, իրենց համարձակ ձևացնող մարդկանց մեծ մասը կյանքում շարքային վախկոտներ են: Իսկ հայրենիքին նվիրված մարդիկ սովորաբար համեստ են և պարկեշտ:

Բազմիցս տարբեր առիթներով ասել եմ՝ երբ ամեն հայի համար մյուս հայը կլինի եղբայր ու քույր, կտիրի սիրո և համերաշխության մթնոլորտ, այդ ժամանակ միայն մենք հաջողություններ կունենանք:

Գոհար ԳԱԼՍՅԱՆ

«Տեր, հստակեցրո՞ւ մեր ճանապարհը դեպի ներս՝ վերստին հանդիպելու մեր սկզբին ու Քեզ...»

Շաբաթներ առաջ Հարության տոնի աղոթքս երևի այսպիսին չլիներ, եթե այդքան խոր պահանջ չունենայի առօրյա վազքերից վերադառնալու դեպի ինքս ինձ և իմ Արարչի շտրիով վերստին նորոգվելու կարիքը չզգայի, ինչն ամենին էլ զարմանալի չէ: Այդուհանդերձ, աղոթքս դժվար թե այսպես ընդհանրական լիներ՝ «մենք»-ի ենթագիտակցական պահանջով, եթե այսքան ընդհանրական չլիներ հանուրիս շեղող-մոլորեցնող, մեր հանապազօրյա հացի հետ խառնված, մեզ ոչինչ չտվող - ընդհակառակը՝ մեզ սնանկացնող, մեր ընդհանրական պատկերն աղճատող, մեզ անվերջ ախտահարող, թմրեցնող-մոլորեցնող ամենագետ շատախոսությունը, որն ընդամենը գործիքներ ունի, և հետևուհետ գրոյացնում է արված ու ասված, գրված ու ստեղծված ամենայն կարևորը՝ իրենով անելով ամեն ճշմարտություն, ամեն օր ու ժամ ավելի ու ավելի ծանրացնելով մեր օդն ու քայլը՝ արդեն մեր աչքն ու ականջները մխրճվող եղերներից ու սոցցանցերից... Մենք մեր ներքին պաշտպանական բնագոյներով ու գիտակցությամբ ըմբոստանում ենք, և առաջնայինը՝ հաղթահարում մի ու կեցության մասին մտահոգված գործում, միայն թե՛ դադարում ենք խորհել-մտորել: Խոլման, ներհայեցողության, ապաշխարության, ինքնամաքման, առողջ հատիկի սնուցման, փայլալայնքի, ճշգրիտ ժառանգականության, գթասրտության, ներողամտության, գոհության ու երախտագիտության մասին մենք քիչ ենք խորհում: Ամենախոսությունը դրա հակառակի շահարկումներով աչք է հանում՝ միշտ օրինանքի հակառակն ունենալով անեծք ու հայհոյանք բերանում... և չարությունը-չարամտությունը, չարահավանությունը գեներացվում է...

Հենց այսպես՝ մշակվում է հակամշակույթ: Հենց այսպես՝ գրված Բառը, որն իր ժամանակին է ասվել ու գրվել, մնում է անհասանելի: Հենց այսպես Հանրությունն անմասն է մնում իրեն այնքան պիտանի, կազդուրիչ ու նորոգող Բանից, և նրա համար հաճախ անհասանելի են մնում Աստծո շտրիյալ բաժանորդները...

Նաիրա ԽԱՉԱՏՐՅԱՆ Բան. գիտ. թեկնածու, դոցենտ

Հայրենասիրական պայթույթով հարուստ է մեր գրականությունը: Խորե- նացուց առաջ ու հետո յուրաքանչյուրը փորձել է պատկերել իր Հայաստանը: Հայաստան հայտնաբերեց նաև Համո Սահյանը, հայոց պատմության խոթաշատ ընթացքի փոշիներում ու մանկության աշխարհի երանավետ հովիտներում, ուր ապրելն ինքնուրույն հաստատում է ու ակամա հերոսություն, իսկ մեռնելը՝ անմահություն. «Ու պատմական պատկերն էլ քննել է... Խառնվել այն հողին, որ իրեն սնել է»:

Գրեթե ամեն օր բանաստեղծի վերժամանակյա պոեզիայի համագային ճանաչողության պահանջը դառնում է հրամայական: Ինչպես Հրանտ Մաթևոսյանը կասեր. «Սահյանը ժամանակների ու տարածությունների մեր ջրուտ ու դյուրագրգիռ խաչմերուկի հայ մարդը եղավ, և իր խոսքը մեր երթի համար օրհներգ և իր գործը դրոշի ճիշտ մեր պատկերը դարձավ»: Անհանգիստ մեր դարում, երբ լույսի արագությամբ գահավիժում են ազգային ու համամարդկային մի շարք առաքինի արժեքներ, Սահյանի պոեզիան շարունակում է իր ազգափրկիչ հաղթարշավը.

Խեղդվում ենք մենության անձա- վում.../Չենք քայլում, ուր մնաց թոնկ- լը.../Անցյալը թողել ենք անցյալում.../Եվ փակ են գալիքի դռները.../Զգիլուն, թե ո՞ր ենք գնալու.../Բայց գիտենք, որ ինչ էլ պատահի.../Աշխարհում մենք մենք ենք մնալու.../Ճեղքելով շարությունն աշխարհի:

Սահյան մարդն ու Սահյան երգը երբեք չզավաճանեցին իրար: Հենց այդ ազնվությունն է առաջին հերթին գրավում ընթերցողին: Սահյանին վստահելով՝ համոզվում ես, որ բանաստեղծի երգն, ըստ էության, իր նման հողեղեն է. նա գուցե չապրեց երազային ու եթերային տիրույթներում, երբեք չորոնեց ատեղծվածայինն ու աստվածայինը, սակայն ակամա ստեղծեց մի անսնձնական մոլորակ, ուր տեր ու տիրական է պոեզիան: Նրա միջով անցնող ամեն ոք մաքրվում է, իսկ հոգուն ու մտքին սահյանական անկեղծ մանկիչ կնիքն է դրվում՝ մարդ - մարդկայինի որակավորումով: Ինքն իրեն ճշմարտության ժամապահ կարգած բանաստեղծը երբեք չկարողացավ մերվել ստի հետ.

Ու եղավ սրի հրավառություն.../Ու խաբեության հարսանիք եղավ.../... Մորթս լիրք եղավ, Աստվածս՝ մոռալ.../ Հրճվանքս՝ շինծու, փրճանքս՝ ձրի...

Հայաստանս գուցե քարահող է, անմշակ ու չոր ձորուսար է, դժվար է իջնել-ելնելը, հարուստ չէ օգտակար հանածոներով, ձմեռը ցրտաշունչ է, ամառը՝ տոթակեղ, և էլի ինչ-որ հատկանիշներ ու երևույթներ, սակայն միայն այստեղ կարելի է հոգին խորովել սեփական մոլորում, իսկ բախտից՝ խոռովել չկա... Անբացատրելի է առանց ինքը քեզ ապրելու փիլիսոփայությունը: Այդ ատեղծվածից է, որ աշխարհը հայրենի տուն է, իսկ մահը թաքնվել է յոթնապատիկ լեռան ետևում:

Նորից եկել հին ցավերն են մեզ խոցում.../Խոսք փրկող եմ լսում հեռու Դեր-Զորից.../Եվ մեզ վրա մահն իր ուժերն է փորձում.../Եվ դողում են մահվան ձեռքերը նորից:

Հայրենիքի անունից խոսելու իրավունքը բանաստեղծը նվաճել է գրեթե

վեց տասնամյակի տրնաջան ու անկանգ արարումով՝ մաքառելով հայրենական պոեզիայի դարձարձիկ ոլորաններում: Հայաստանյան թեման Սահյանին երբեք չի լքել. այն բանաստեղծի հասունացման հետ ստացել է ավելի խրոխտ ու համարձակ շեշտեր: Միքիլ-պաշտելուց զատ բանաստեղծը տերն է իր հայրենիքի, նրա պաշտպանն է: Հայաստանի շենացումը հայի լինելիության ու հարատևման առհավատյան է: Այս մի բոտ քարեղեն հողը վտանգված է, բախտին ապավինել չարժե, մեկ անգամ չէ, որ այն դավել է. անհրաժեշտ է ամրացնել նախրյան բերդը, քանի դեռ վերքը մխում է ու ցավ պատճառում.

...Ելիր, անգեն իմ ժողովուրդ.../ Բարձրացիր քո լեռները լուրթ.../Եվ թող աշխարհն ականջ անի.../Թե ինչպես ես դու որոպում.../Չայնով Չենով

քո Օհանի.../Որ Դավիթը ելնի նորից...

Բացի մեզ ծանոթ բանաստեղծական մոտիվները, որոնցում պոետը կայացած է ու ավանդների շարունակող, ազգային աշխարհագրագրության տիրույթներում բանաստեղծական անհայտ թեմաներ դրոշմվեցին, իրականության ու երազային աշխարհի բախտը երկփեղկեց բանաստեղծի փխրուն էությունն ու դարձավ ծվելիք երգերի մշտահմա ակունք՝ դառնալով պոետին բնորոշ ուղեգիծ՝ ձևի ու բովանդակության մեջ շարունակելով մնալ անօրինակ հուզական ու խիստ ինքնահնար: Ութսունականների վերջին տարիներն ազդարարեցին ազգային գաղափարների նոր վերելքի ծնունդը: Յոթանասունիները հասած բանաստեղծի սպասելիքներն աստիճանաբար չեզոքանում էին՝ ժամանակի պահանջով խորանում էր երազի ու իրականության անջրպետը: Այդ հուզական տարիներին՝ Արցախյան շարժում ու պատերազմ, երկրաշարժի սևադեմ քառու ու ազգային գաղափարների անգուսպ պոռթկում, հայաստանոտ շրթունքներով բանաստեղծը երկնում է իր ամենահամարձակ ու քաղաքական շնչով հագեցած բանաստեղծությունների վերջին ժողովածուն՝ «Ինձ բացակա չդնեք» պատվիրանով, որի տպագրությունը, ավաղ, չէր տեսնելու: Գիրքը թեև պատրաստ էր տպագրության, սակայն չի տպագրվել «դրախտավայրը մեր դժբախտավայր, գաղթավայր, գոմարդավայր» դարձրած իշխանավորների մասին գրված ճշմարիտ բանաստեղծությունների պատճառով:

Զգիլուն ինչու գլուխ չեմ հանում.../Ոչ սիրուց, ոչ էլ արելությունից.../Տերերից, որ դեռ սուրն են խթանում.../Եվ այս փրկական անտերությունից.../Բախտը բաշխում են դեռ հին շերտերով.../Բակ նորով միայն հույսն են բաժանում... Բաղաքական բանաստեղծություն-

ներում ներկայանում է բոլորովին մի նոր Սահյան... ավելի վճռական, իմաստուն ու հոգևոր տառապանքից ավանդական համեստության ամբարտակներն ավերող:

Եկան... Տիրացան ու ավերեցին.../ Իրենց մեղքերը մեզ չներեցին.../Մեծահոգաբար մեզ նվիրեցին.../Զեհու, գրավարար այս բազարները.../Եվ ինչ մնաց մեզ... մրսած մեղկություն.../Շապիկը հանած օձի մերկություն.../Թող կեցցեն այս նոր նորին մեծություն.../Վերին պարունայք Բաջնազարները:


Երկրին ու ժողովրդին պատուհասած աղետներն ու քաղաքական կյանքի հիասթափությունները ցավոտ ազդեցություն են թողնում հայրենիքի ներկայով ու ապագայով մտահոգված բանաստեղծի հոգում այն աստիճան, որ գրում է, երևի թե ողջ հայ պոեզիայի պատմության մեջ, ամենամռայլ ու

անջրպետում ժամանակները. նա չի կորվում անցյալից, չի վերանում ներկայից, նույնիսկ տեսնում է ապագան, որն իր իմաստասիրական արտահայտությունն է գտել քաղաքական պոեզիայի համաձայն էջերում.

Միահամուտ, միակրոն.../Բոնուցք էինք ու ոգի.../Օրարացել, խորթացել.../Ու փախել ենք մեզանից.../Քանդու- քարափ ենք եղել.../Ո՞վ պիտի գա նորոգի:

Մերօրյա անկումների ու արժեքների փոշիացման գոեհիկ միջավայրում շատ գործածվելուց ու երբեմն անգամ շահարկվելուց, բարեբախտաբար, չեն մաշվել ու արժեզրկվել սահյանական՝ երբեմն առօրեական ու պարզ թվացող, բայց խորքում անհատակ գանձեր պարունակող մտքի պատգամները: Նրա պոեզիայի ողջ փիլիսոփայությունը ներդաշնակություն-

ՍԱՀՅԱՆԱԿԱՆ ԴՈՒՋԻԱՅԻ ՈՂՋԱՆՍՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ



Կարոտյանի և Սահյանի ընկերակցությունը

հավասարակշռությունն է՝ կուսական բնության ու մարդային հանճարի, վրեժի ու սիրո, կյանքի ու մահվան հավիտենական լաբիրինթոսում: Սահյանի խոսքը պարզ է և հոսում է անկեղծ ու ինքնաբերական, այն շատ սովորական ու մտերմիկ զրույց է նախ ինքն իր հետ, հետո արդեն ընթերցողի, առանց կաշկանդումների ու ավերող սեթևեթանքի: Այսօր առավել ևս համախմբվել է պետք ազգային ազնիվ զգացումների շուրջ, ուստի՝ անհրաժեշտ է՝ այս առանձնահատուկ պոեզիայի կրողները դառնանք ու բոնուցքվենք նրա ազգափրկիչ գաղափարների հանգույն:

Թվում է, թե կամենայք.../Մի օր երկիրը կթռչեք.../Ձեր թռիչքի ժամանակ.../ Ինձ բացակա չդնեք:

Քմահաճ ենք, դժվար ենք միավորվում, տարակարծիք ենք ու մատների նման անջատ, բայց Սահյանի պոեզիայով հավաքական ենք, չկա մեկը, որի աչքերն արցունքով չլցվեն, շրթունքը չհաքի, հասակը չծաղկի այդ հրաշածին պոեզիայից, որի պատգամը հայի փրկությունն է ու ապագան:

Հայաստան ասելիս Սահյան ենք հիշում: Մի տարբերակում հեղինակը ցավով ասում է. «Հայաստան ասեմ՝ շիկնեմ ամոթից», մյուսում՝ «Հայաստան ասելիս թևերս բացվում են, հասակս ծաղկում է», վերջինիս ազդեցությամբ կարելի է «հրճվանքից հավելվել ու արցունք դառնալ», չէ՞ որ հայրենիքի խորհրդանիշ դարձած սահյանական խոհը միանշանակ համոզում է. «Հայաստան ասելիս էլ մահը ում շունն է... Ուրեմն՝ «Օրվա երգը» մեր ունկերում՝ որպես օրհներգ «...Մեր սահմաններում վառված հրդեհը մարելու համար» գնաք դեպի գալիք...

Թող արժիվ դառնա նոյյան աղավին.../Մեր բարձունքներին թառելու գնա.../Փորձված մեր փորձը մեզ այս անելից.../Ելքի մի հնար ճարելու գնա.../ Թող նժդեհանա ուզվի մեր ոգին.../ Մյունյաց լեռները պահելու գնա:

վիատ տողերը.

Փոխվել են դերերն ու րեբերը.../ Բայց նույնն է երախը վիշապի.../ Մրսնք են այս երկրի րեբերը.../Աղոթեմ, որ մահս շփասպի...

Սակայն հիասթափության ու ընկճախտի այս ընթացքը տևական չէ, ավելի քան հավատացած է բանաստեղծը.

Քանի ծով ենք կրթել-անցել.../... Այս ծովին էլ կդիմանանք.../Հավաքացեք...

Վերջին տասնամյակներում Սահյանն իր երգերով դարձել է հայ մարդու մտքի ուղեկիցն առանց կուսակցական, տարիքային ու մի շարք այլ տարակարգումների: Ներկա ժամանակների համար, երբ ամենուր պայքար է ու անիմաստ հակամարտություն, անմիաբանություն անգամ ազգային հարցերում, ընկերական ու արյունակցական կապերում, Սահյանը գարմանալիորեն բոլորին է, և բոլորն են իրենը:

Ինչ պատահեց, այս ո՞ր հասար.../ Ասա, ես ինչ անեմ.../Բեր ցավերդ, հոգնած աշխարհ.../Ի՞նչ շալակիս, փունեմ...

Հայի ազնիվ տեսակի պահպանման գաղտնիքն առանց չափազանցնելու Սահյանի բանաստեղծական խիզախումներում է անթեղված, ուր չեն



Արմենուհի ՄԻՍՅԱՆ

Քայլում եմ քեզ վրա
ու թողնում հետքերս,
որ մտքերիս պատճենն են
սիրո տեսքով:
Հետո դու էլ սիրով
կծածկեն ինձ,
հող...

- Սիրում եմ քեզ,-
ասաց քամին ծառին
ու գետնով տվեց
նրա տերևները...

Ավիսասանքս շաղ տամ
դաշտերին՝
ինձնից կծկեն այստեղ-այնտեղ,
որ մենությունից թոշենն,
խկ բուրմունքը
երկինք հասնի...
Ծաղկի ու երկնքի միջև
հավերժ սպասում կա՝
բուրմունքի ձևով...

Ամենահեռու վայրերը,
ուր կարող եմ ճանաչողդել,
իմ խորքերն են.
միայն այնտեղից ցանկություն
չունեմ տուն վերադառնալու...

Դու նորից չհասկացար ինձ:
Արցունքներ պետք չեն.
դրսում անձրև է գալիս...

Դու հաղթեցիր ինձ,
հոգևորությամբ.
թույլ տուր ինձ
հանգստանալ.
պարտվել եմ ես...

Երբ սերը քանդեց
բոլոր արգելքները
երեկվա ու վաղվա միջև,
մնաց ամենամեծ պատնեշը՝
այսօրը.
դու չկաս այնտեղ...

Գնամ՝
հոգիս աշնան արևին տամ.
դիմանալ է պետք
եկող ցրտերին...

Բորիկ ոտքերով
իմ կարոտն է վազում

արձակ դաշտերում
ու տեղ չի հասնում...

Բանաստեղծություն գրել...
բանաստեղծություն գրել...
բանաստեղծություն շնչում են,
եթե թոքերը մտեր են լույ...
Հ. Գ.
բանաստեղծություն կարելի է
երբեմն նաև գրի առնել:

Մասներս չդիմացան
խոսքերիդ
ու ծավելեցին ցավից.
որքան թրթիռ փակվեց
ափիս մեջ բաց...

Եվ կգա օրը,
որ ես կասեմ մահին.
«Բարև, սիրելիս»
ու նա չի կարող չգալ ինձ մոտ
(այնքան քիչ է սիրվել),
թե սիրելը ապրել է,
ուրեմն՝ մահն էլ է ուզում
ապրել իմ մեջ...

Թե նկատեցին մարդիկ,
որ քիչ բարձր ես իրենցից,
պատրաստ եղիր ուրեմն
կախաղան հանվելու...

Ես երբեք դատարկ ձեռքով
չեկա քեզ մոտ.
մի կտոր երկինք
միշտ եղել է հետս...

Ես ճանաչեցի ձեզ,
քամուց շոյված ծառեր,
դուք առաջինն եք ծաղկել...


Սիրող տուր՝
զարդանախշեր անեմ վրան.
անարվեստ՝
սին եմ ու տարտամ...

Գիշերն արթնացա,
չդադարի անձրևն հանկարծ.
անձրևի ոխով է
սիրտս բարախում հիմա...

Մի տղա, ափին կանգնած,
քարեր էր գցում ջրի մեջ...
Այդ իմ կասկածներն են,
որ քարկոծում են հավատս...

Հրաշքը եկավ
ու խոնարհվեց
պարզության առջև.
- Ինչ հրաշալի ես դու,
պարզություն...

Լավ է հեռանամ ինքս իմ մեջ,
քան հոգիս խեղճ
պարտադրված միասնությամբ.
ինչ անե՞ր է երկինքը ազատ...



Դավիթ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՄԱՆՈՒՇԱԿԻ ԱՆՁՐԵՎԸ

Անձրևն ուռկան էր գցել քաղաքի վրա,
և Մեհրաբը հիշեց, որ ջահել տարիներին
սիրում էր դա: Իսկ հիմա ոտքը ցավում
էր, պետք է դանդաղ քայլեր: Մայիտակ
թղթի տրցակը տանն էր, գրասեղանին:
Չէր գրում վաղուց: Նորերը կային, կրկե-
սային խանդավառությամբ, իրենք էին
գրում ու գրում, գրքույկները ծախվում
էին: Փողը չէր խանգարի անշուշտ: Երա-
նի թե լիներ: Ծանոթ կրպակը աջից էր:
Սիգարետ ուզեց: Վաճառող Մարուսը
ասաց՝ թանկացել է: Որ ինչ, հարցրեց
Մեհրաբը: Ղեկավարությունը չի ծխում,
ասաց Մարուսը: Մեհրաբը լռեց:
Չէ, այսօր կգրեմ, մոլտաց նա: Կհասց-
նեմ: Աստիճանների վրա հանդիպեց
Գարին՝ շնիկը: Ուրախացավ: Մեհրաբը
մի քանի անգամ հավի ոսկորներ էր տվել
նրան: Մտավ տուն: Կինը փլավի պատ-
րաստություն էր սկսել: Օղի չունենք,
մտածեց նախկին գրողը: Ունենանք էլ՝
տիկինը թաքցրած կլինի, արգելված է
վիրահատությունից հետո:

Հայրը թունդ ծխող էր: Սիրում էր «Մա-
սիս»: Լավագույնն էր: Ականջը՝ ընդունի-
չին, միսած՝ Ամերիկայի ձայն էր լսում ու
ծխում: Քույրն այնտեղ էր: Չէին տեսել
տասնամյակներով: Քույրը նամակներով
հորդորում էր՝ ջղարա մի ծխիր:
Մեհրաբը մոտեցավ գրասեղանին:
Ոնց սկսեք: Վախ կար ներսից: Հիշեց:
Աքսորական հորեղբայրը «Պրիմա» էր
քաշում, ամենաէժանն ու ամենադառը:
Բայց հիմա այդպիսիք չկային: Մարուսից
առել էր, բայց չվառեց: Ուզում էր ցանց-
կեն անձրևի մասին գրել: Համալսարա-
նից գալիս էին դանդաղաքայի: Մանուշա-
կը: Նրա համար այդ ծաղիկներից էր առ-
նում: Գարուն էր, ինչպես հիմա: Գրիչն
առավ ու սկսեց Մանուշակին նկարել,
այդ շնորհքն ուներ, վերջերս ցուցահան-
դես բացեց:
Չկար Մանուշակը: Ինքը թաղմանը
չգնաց, որ գնար, տեղում կմտներ:
Ելավ պատշգամբ: Վերջապես ծխեց:
Դիմացը գլխապատառ շինարարու-
թյուն էր: Արդեն Արարատը չէր երևում:
Վոնդում են Արարատս, ինձ էլ են վոնդել
ուզում իմ սարի հետ: Հին եմ, բա ոնց:
Վատ չեմ գրում, նաև նկարում: Խոսում
եմ մարդավարի հայերենով, ավելորդ եմ
հաստատ:
Լուսացրեց: Գրեց պատմվածք: Կարմ-
րած աչքերով գնաց հրատարակչի մոտ:
Ձեռագիրը դրեց սեղանին: «Մաքրագրե-
լու ուժ չկար», - ասաց: «Կոնյակ լցնեմ», -
ասաց հազար տարվա ընկեր Արմենակը:
«Հա», - արձագանքեց Մեհրաբը:
Մեկ շաբաթ հետո «Մանուշակի
անձրևը» պատմվածքը ձեռքին գնաց Զեյ-
թունի գերեզմանոց: Հասավ շիրմաքարին:
Դրեց «Գրական թերթը»: Գրկեց քարը:
Երեկոյան Մեհրաբին գտան:
Ապրիլ, 2015 թ.

գրական անցուղարձ գրական անցուղարձ գրական անցուղարձ

ԵՐԳԵՐԻ ԾԱՌ

Ապրիլի 17-ին ՀԳՄ կլոր սրահում
տեղի ունեցավ «Երգերի ծառ» մանկա-
կան անթոլոգիայի շնորհանդեսը: Գիրքը
տպագրվել է ՀԳՄ հովանավորությամբ
և «Ծիծեռնակ» ամսագրի աշխատակ-
ցությամբ: Նախագծի հեղինակն ու կազ-
մողը Էդվարդ Միլիտոնյանն է: Ժողովա-
ծուն ամփոփում է ժամանակակից ման-
կագիրների վերջին տարիներին «Ծի-
ծեռնակ» մանկական ամսագրում և նոր
մանկական գրքերում տպագրված բա-
նաստեղծություններ և պատմվածքներ:
ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը
շնորհավորեց մանկագիրներին տպա-
գրված անթոլոգիայի կապակցությամբ՝
նշելով, որ անթոլոգիայի ամենամյա
տպագրությունը շարունակական կլինի:
«Մանկական գրականությունը երեխա-
յի զարգացման կարևոր հիմքերից մեկն
է, և կարևոր է մեթոդյա մանկագիրների
գործունեությունը՝ ստեղծելու լավ գրա-
կանություն: Պետք է հետևողական լինել,
որ ասպարեզը ծառայի երեխայի զար-
գացման և կրթության համար, այլ՝ ոչ
թե խեղաթյուրի նրա հոգեբանությունը:
Մանկագրության առջև այսօր աշխար-
հում մեծ խնդիր կա. ինչ թեմայով, ինչ
լեզվամտածողությամբ և ինչ հերոսների
մասին գրել», - ասաց նա:
Ելույթ ունեցան Ս. Կոսյանը, Շ.
Մկրտչյանը, Ռ. Շառոյանը, Զ. Պետրոս-



«Ծիծեռնակ» ամսագրի խմբագիր
Անուշ Վարդանյանը խոսեց գրքում նե-
րառված հեղինակների ու նրանց ստեղ-
ծագործությունների առանձնահատ-
կությունների մասին՝ ասելով, որ գրքում
տպագրված են թե՛ ավանդական, թե՛ ժա-
մանակակից թեմաներով ստեղծագոր-
ծություններ, և այն նպատակահարմար
է դպրոցականների համար: Շնորհան-
դեսի ընթացքում մանկագիրներն ընթեր-
ցեցին իրենց ստեղծագործություններից:
Սևի. լրագ.



**ՀԳՄ վարչությունը
շնորհավորում է բանաստեղծ,
հրապարակախոս
Սուկրատ Խանյանին
ծննդյան 95-ամյակի առթիվ**

**«Գրական թերթը» միանում է
շնորհավորանքին**

որ կանք,
Թշնամին փեշի տակ
թաքցնում է թուրը,
Իսկ մենք խորհում ենք՝
որպես բարեկամ:
Կյանքը չի փոխվել,
չի փոխվել ոչինչ,
Թույլին չի օգնում
և ոչ մի առյան,
Թե հարևանդ
չար է, արնածին,
Թուրը չպետք է
դու դնես պատյան:
Երևան, 23.11.2020 թ.,

ՍԻՐՏԸ ՆՈՒՐԲ Է

Սիրտը նուրբ է, բարեկամներ,
Զգույշ, սրտեր՝ չկտորեք...
Նա լեռնային լիճ է վճիտ,
Քար չնետեք, կհուզվի,
Զփորփորեք վերքը նրա,
Դառն հուշերում կսուզվի:
Սիրտը ծառ չէ, որ ճյուղերը
Հատեն բնից, չիմանա,
Սիրտը քար չէ, որ բնության
Հարվածներին դիմանա:
Սրտում կանչ կա, մոր քաղցր կանչ,
Մերթ գրնգուն, մերթ սրտում,
Սիրո վերելք, սիրո նահանջ,
Սիրո արցունք կա սրտում:
Սրտում գոհված հոր կսկիծ կա
Եվ անմուրազ եղբոր հուշ,
Սրտում որդու ժպիտներ կան,
Քրոջ զգվանք կա անուշ:
Աշխարհի չափ սիրտը լայն է,
Աշխարհի չափ անեզերք,
Բայց աշխարհը արդյոք ունի
Այսքան կսկիծ, այսքան վերք:
Սիրտը նուրբ է, բարեկամներ,
Զգույշ, սրտեր չկտորեք:

Սարերն ի վեր
Տարիներս
Դեպի աստղեր
Սլացան...
Գագաթների
Արևի հետ
Համբուրվեցին
Հրացայտ...
Հիմա դեպի
Զորերը խոր
Վար են հոսում
Խենթացած...
Աղաչում եմ,
Տարիներս,
Մի քիչ դանդաղ
Իջեք ցած:

1990 թ., Սյրեփանասկերտ

ՍԻՐՏՍ

Ջահել եմ դեռ, այո՛, ջահել,
Սիրտս ջահել է մտում,
Երագներս դարձրած ջահեր՝
Երբեք հանգիստ չեմ քնում...
Ինը տասնյակ գարնան տեր եմ,
Հպարտ իմ կյանքն եմ վարում,
Կյանքս՝ հեքիաթ, սիրտս Սեր է,
Սիրո երգեր եմ ցանում...
Հավատացե՛ք ինձ, ջահելներ,
Սիրտը Սեր է, Կյանքը՝ կամք,
Մեր պապերի սրտի խոսքն է.
- Կյանքը Սեր է, Սերը՝ կյանք:

22.01.2025 թ., Երևան

ՉԷ՛, ՉԵՄ ԱՍԻ

Չէ՛, չեմ ասի՝ ծերացել եմ,
Էլ չեմ կարող գրել,
Արդեն երգից հեռացել եմ,
Գրիչս ցած դրել...
Արցախցի եմ, Քիրսն եմ հպարտ՝
Աստղածախս բարձունք,
Դարերի մեջ չեմ ունեցել

Պարտության արցունք...
Մարտերի մեջ եղել եմ հար
Հայկ Նահապետ, Նժդեհ,
Բարձունքներին միշտ սիրահար,
Թե՛ծ կայծակ ու հրդեհ...
Շնորհակալ եմ քեզ, իմ Արցախ,
Իմ պապերի օրրան,
Քո անունը Պատվոգիր էր՝
Դաջված Սրտիս վրա...
Դարը դարին տվել է թև
Ու թևերով անցել,
Հաղթել է նա մարտերի մեջ՝
Շրթին երգը փառքիս...
Քանզի ահեղ մարտերի մեջ
Թուրն է եղել ձեռքիս...

19.03.2024 թ., Երևան

ԵՐԱԶ

Այս գիշեր - երագիս մեջ
Մեր Կավագ վանքումն էի,
Մեր Կավագ վանքի բակում
Կարոտի գրկումն էի,
Կավագի բեմի առջև
Խաչատուր իմ պապիկն էր,
Իսկ մոտը քրկալ պարզած՝
Սրբասուրբ իմ Տատիկն էր...
Խաչատուր պապիս ձեռքին
Ոսկեգոծ խաչն էր շողում,
Ոսկեգոծ խաչի շուքին
Տատիկիս սիրտն էր դողում...
Սրբասուրբ այդ դողի մոտ
Ես ծունկի իջա լոին,
Յոթներանգ մի ծիածան
Կամարվեց սրտիս գրին...
Երդումի խոսք էր գիրս
Իմ կարոտ սրտին փարված...
- Չեմ թողնի մենակ մնաս,
Իմ սիրտն ես՝ ցավից վառված,
Այդ պահին Աստված վերից
Շշնջաց՝ Չեմ թողնի մնաս մենակ,
Առանց քեզ՝ ինքս չկամ,
Ամենուր հետդ կգամ,
Որ քեզ հետ Աստված մնամ,
Մենք իրար սրտում Մեկ ենք,
Իրարու պահող ձեռք ենք...

01.01.2025 թ., Երևան

ԿՅԱՆՔԻՍ ԱՆՈՒՆԸ

Կյանքիս աշունը գունաթափ եղավ,
Թռչնած ծաղկեփունջ
դարձան հույսերս,
Հայրենի գյուղս օտարը խլեց,
Խլեց մանկության ոտնահետքերս:
Հիմա օտարն է վխտում բակիս մեջ,
Օտարն է լսում աղբյուրիս երգը,
Օտարն է օտար ժպիտներով նենգ
Հավաքում այգուս
քաղցրահամ բերքը:
Լուռ է արծաթված իմ փշատենին,
Բերքից ճկվել է բաղամի ծառը,
Տեսնես տանիքի ո՞ր անկյունում է
Հյուսել իր բույնը գարնան ծիծառը:
Ո՞ւմ խելքից է, և ո՞վ է մեղավոր,
Ինչո՞ւ օտարվեց իմ գյուղի ճամփան,
Հայրենի տունը տանուլ տվողը
Տանուլ է տալիս նաև ապագան:
Ո՞վ է մեղավոր, իզուր է հարցը,
Մեղավորը հենց ինքներս ենք,

ԱՄԱՐԱՍ

Օրերը հոսել են վրայով,
Սրտերը ձուլվել են քարերին,
Քարերը սրտերի փխրությանը
Հասել են ապագա դարերին:
Մեարայան տառեր են պատերին,
Մեարայան հուշեր են մշտարթուն,
Մի անգամ տեսնելու՞ ուղեղ
Զարմացած աչքի պես չի թարթում:
Չի թարթում, և խղճիդ աչքերով
Տեսնում ես թափվող քարերը,
Նրանով հիացած խոսելիս
Տագնապով շարվում են բառերդ,
Շարվում են հարազատ
մանկանց պես,
Ճշում են, կանչում են հույսերով,
Հենվելով քո ազնիվ հավատին՝
Լցվում ես փրկության լույսերով:

1988 թ., Ամարաս

**ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ՝ ԳՐՎԱԾ
ԵՐԱԶՈՒՄ**

Այս քանի օր է, Երևանում եմ,
Մակայն իմ սիրտը՝
Արցախիս գրկում,
Թշնամու ամեն նետած մի հրթիռ
Ասես պայթում է իմ կարոտ սրտում:
Մոռով թևում եմ Ստեփանակերտ,
Փարվում փուրված պատերին նրա,
Փված շենքերի ամեն վեմ ու քար
Ասես ընկած են իմ կրծքի վրա...
Երագիս մեջ եմ ու քայլում եմ ես
Դեպ հրապարակ Վերածնության.
Արցախուհին է այնտեղ լուսերես՝
Կենարար հուրը մեր հպարտության,
Կովի է ճամփում քաջ մարտիկներին,
Նրբին խոնարհվում շարքերի առջև,
Աստծո օրհնանքն է նրա շուրթերին
Ամեն մի բառը՝ ջերմ ու արծվաթև:
Ու զինվորները մոտենում են լուռ,
Համբուրում քնքուշ մատները նրա,
Շշնջում՝ Քեզ պես մայր ունեցողը
Սասնա Դավիթ է՝ սրտով անվարան:
Ոտքի է կանգնում
Արցախուհին մայր՝
Հավատի խոսքը հայկյան շուրթերին.
«Ձեզ բարի ճամփա,
բարի վերադարձ,
Թշնամին նենգ է, նրան չենք ների»:
Հնչում է «Ոտա»-ն հայրողիների,
Ասել է՝ Այո՛, մենք հաղթելու ենք,
Այդ պահին ձեռքին Եռագույնը մեր՝
Հպարտ հառնում է Արցախն աներեր:
Արծիվ են դառնում զինվոր տղերքը
Ու խորխոր նետվում
պատերազմի դաշտ,
Օդում պարզվում է
Արցախ-մոր ձեռքը,
Զորքերի մեջ է
Արցախն արծվապաշտ:
Իմ երագի մեջ ծնված այս երգը
Մեր ոգու ճիչն է, հաղթության վկան,
Զինվորի ճամփան երբ
մայրն է օրհնում,
Նման զինվորին պարտություն չկա:
26.10.2020 թ., Երևան

Ո՞րն է Սուկրատ Խանյան-
նի բանաստեղծությունների
դրականը և գրավականը: Հե-
ղինակը ցուցաբերել է անսեթ-
նեթ, պարզ ու անկեղծ գրելու
անժխտելի կարողություն:
Երբ ասելիք կա, նա կարո-
ղանում է գտնել արտահայտ-
չական դիպուկ ձևեր և ցան-
կացած տրամադրությամբ
վարակել ընթերցողին: Հա-
ջող բանաստեղծությունների
քանակը քիչ չէ՝ «Սիրտ», «Իմ
սերնդի խոսքը», «Մորս տեն-
չը», «Իմ ընկերները», «Թե
հարցնեք», «Այնքան, այնքան
եմ հիմա քեզ սիրում» և այլն:
Որքան լավ է բնութագրվում
ազնիվ, անխարդախ ստեղ-
ծագործող մարդու սիրտը:
Սուկրատ Խանյանը բա-
նաստեղծական մի լավ սովոր-
ության է հետևում. աշխա-
տում է իր բանաստեղծույթ-
յունն ավարտել աֆորիստիկ,
հակիրճ ու ավարտուն մտքով:

ՄԿՐՏԻԶ ԿՈՐՅՈՒՆ

Սուկրատ Խանյանը բա-
նաստեղծական բազմաթիվ
գրքերի հեղինակ է: Ընթեր-
ցողները ջերմորեն են ընդունում
նրա ժողովածուները,
ելույթները: Բանաստեղծի
գործերում նրա առաջին իսկ
քայլերից մինչև այսօր, հիմ-
նական և առանցքային տեղ
է գրավում Հայրենական մեծ
պատերազմի թեման:
Սուկրատ Խանյան բա-
նաստեղծին հոգեհարազատ
է մանուկների աշխարհը:
Դրա առահավաստյան է նրա
«Իմ նվերը» գրքույկը: Լինե-
լով միաժամանակ գրակա-
նագետ՝ նա շնորհակալ գործ
է կատարում և այս ասպարեզում:
«Արցախի արծիվը»
պոեմը ընդհանրության մեջ
ընկալվում է որպես հին ու
նոր ժամանակների խորքից
եկած տաղանդավոր մի գրչի
հիշատակարան:

**ՎԱՐԴԱՆ
ՀԱԿՈՒՅԱՆ**

Սուկրատ Խանյանը Ղա-
րաբաղի գրական օջախի
խաչազարդ պոետներից մեկն է:
Նա բանաստեղծ է, գրակա-
նագետ, մանկավարժ ու նաև
լավ դարաբաղի: Խանյանի
երգերը հյուսված են արցախ-
յան բնության խայտաբղետ
նախշերով, շնչավորված են
լեռնաշխարհի ծաղկների
բույրերով:
Սուկրատ Խանյանը իր եր-
կարատև աշխատանքի վաս-
տակով հարստացրել է մեր
պոեզիան, գրականագիտա-
կան միտքը և մանկավարժա-
կան գործը: Նա իրավունք ու-
նի հպարտանալու այդ վաս-
տակով:
**ՀՐԱԶՍԱ
ԲԵԳԼԱՐՅԱՆ**

ՍՕՎՐԱՏ ԽԱՆԵԱՆՆԸ 95 ՏԱՐԻՆԵՐԻ ԸՆԴՄԷՋԸՆ

Սօկրատ Խանեանը Արցախի ու ընդհանրապէս հայ գրական մտածողութեան առաջնային դէմքերից է: Սա յատկապէս ընդգծում ենք այսօր, երբ Արցախը այլևս կարծես դառնում է առժամային յիշողութիւն, որ բացում է նաև Սօկրատ Խանեանի ստեղծագործական աշխարհի շնորհիւ: Նա մեզ յուշում է, որ քանի կայ մեր ազգային յիշողութիւնը, նրա առաջին պաշտ-

պանների մէջ իր դերով, իր ծառայութեամբ թևածում է գրական իր անհանգիստ մտածողութիւնը: Նրան բաժին ընկաւ Արցախի դժուարին ու հերոսական կեանքի նոր տարեգրութիւնը: 100 տարեկանին մօտեցող, իմաստուն կեանք ապրած բանաստեղծը յուշում է՝ որտեղ էլ լինի, բարձր է պահելու Արցախի ոչ այնքան յիշողութիւնը, որքան այն ներկայ դարձնելու ազնիւ ջանքը: Իսկ Արցախը ներկայ է իր շնչով, իր գեղարուեստական գործիքներով:

Ժողովածուներից մէկի խորագիրը՝ «Տարիներ», ուր ընդգրկուած են բանաստեղծութիւններ, պօէմներ, բալլադներ և լեզնէներ, բերում է ոչ միայն դարաբաղեան շունչը, այլև մարդու համար խիստ կա-

րևոր՝ անցեալի և ներկայի ճանաչման խորքը, այն, ինչ դարձել է Սօկրատ Խանեանի բանաստեղծական աշխարհի դիմագիծը:

Բանաստեղծ, դասախօս թէ մանկավարժ, նա այսօր էլ պահում է Արցախի ոգին իւրաքանչիւրիս մէջ: Եւ այդ ոգին ճանաչարհ ունի անցնելու հենց իր նուիրումի շնորհիւ: Երբ ժողովածուներից մէկը վերնագրում է «Թևառոր իմ կեանք», մեզ ուղղորդում է հասկանալ, որ այդ կեանքը բոլորինս է, ու մենք պարտաւոր ենք պատասխանատու մնալ այնպէս, ինչպէս ինքը:

Սուրեն ԴԱՆԻԷԼԵԱՆ

Ս. Խանյանի պոեզիայում հայրենիքը և քնարական հերոսը հանդես են գալիս միաձույլ, ոչ իրարից մեկուսացված:
*Ես հունդ եմ՝ ներված քո հերկերի մէջ,
Թե քո հերկերը թռչնեն երաշխից,
Կշորանամ ես:
Ես շող եմ
Ձուված արևածագի պայծառ վարսերին,
Թե սև ամպերը հայացքդ ծածկեն,
Կմթնեմ և ես:*

*Իմ էությունը էությունն է քո,
Հայրենիք իմ մեծ...*
Բանաստեղծի մտտ հայրենիք հասկացությունը հաճախ բացահայտված է հայրենի եզերքի նկարագրով: Բնականորէն այս դեպքում դառնում է հայրենասիրական մղումների գրանցման, դրանց պատկերման հիմնական միջոց: Նա փորձում է ստեղծել հարազատ ու կենդանի պատկերների գուգորություններ և դրանց միջոցով բացել իրեն:

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Սօկրատ Աղալարի Խանյանը Արցախի մայր բուռի հենասայուններից էր դեռևս բուռի կազմավորման շրջանից և մնացել է այդպիսին առ այսօր: Ճանաչված գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ, հասարակական գործիչ, հարգված գործընկեր ու դասախօս, հայրենասեր քաղաքացի. այս շարքը շարունակական է: Դժվար է ներկայացնել նրա մարդկային բոլոր վեհ հատկանիշները, որոնց մէջ ընդգծելի են պատասխանատվությունը, պարտաճանաչությունը, գործընկերների և ուսանողների հանդէպ սրտացավությունը, իր հստակ հայրենասիրությամբ, մարդասիրությամբ, լրջախոհությամբ ու կենսականությամբ բոլորին վարակելու մեծ կարողությունը: Նա երբեք չի տրտնջում, չի չարանում

և չի բողոքում ստեղծված դժվարություններից, ինչքան էլ դաժան լինեն դրանք, այլ՝ իր լավատեսությամբ միշտ ձգտում է սփոփել, մխիթարել, ցույց տալ խոչընդոտները հարթելու ուղիները: Պատահական չէ, որ շատ հաճախ ամենատարբեր հարցերով հենց նրան են դիմում ոչ միայն բազմաթիվ մտավորականներ, ուսանողներ, այլև հասարակության ամենատարբեր խավերի ներկայացուցիչներ: Այսօր էլ բոլորիս կողմից հարգված նշանավոր մտավորականը՝ բոլորիս սպան, շարունակում է արարել, ստեղծագործել, տանանյակների հարուստ փորձը փոխանցել իր հազարավոր հայրենակիցներին:

Արմեն ՍԱՐԳՍՅԱՆ

ԱրՊՇ ունկյոր

Մեծ աշխարհ տեսած, գրական, հասարակական, մշակութային, մանկավարժական, գիտական վաստակաշատ գործունեություն ծավալած, բազմաթիվ խոչընդոտներ, արգելքներ քննած-հաղթահարած, ազգային հարցերում՝ իր աներեր դիրքերում ամուր մնացած՝ դիրքորոշումը պահպանած, Արցախյան ազգային-ազատագրական շարժման ակունքներում հայրտորեն կանգնած, բոցաշունչ ելույթներով հանդես եկած (իր վրա սևեռելով թշնամու ոխակալ ուշադրությունը), հնամենի Հայոց Բակուրակերտում՝ Բաքվի ԱՊԻ-ում, ապա՝ Հայրենիքում՝ չքնադ, անգուգական Արցախամուր աշխարհի սրտում, հնամենի Վարարակ-Ստեփանակերտում բուհական ակտիվ գործունեություն ծավալած, դեկավար պաշտոններում աշխատած, արցախցի մտավորականի, հայրենասերի, գրական աշխատողի, ուսանողության, արցախահայության, Արցախի պատիվը բարձր պահած, բազմաթիվ սերունդներ դաստիարակած, անկրկնելի մտավորական, ուսուցիչ, դասախօս Սօկրատ Խան-

յանը: Ապա՝ գրականագիտական հսկայական բարձրարժեք ժառանգություն ստեղծած, բանաստեղծական, մեթոդական, հրապարակախոսական, լրագրային մեծաքանակ, արժեքավոր երկեր հրատարակած, հազարավոր հայորդիների ձեռքով Արցախի ազատագրման, պետականության ձեռքբերման բաղձանքը վայելած, միջազգային հանցագործ Ադրբեջանի կողմից բազմիցս ռազմական էսկալացիայի, պատերազմի, անմարդկային շրջափակման, ճակատագրի դառնագույն դավերին՝ ցեղասպանության հարվածին ենթարկված, պատմական Հայրենիքը՝ Արցախի Հանրապետությունը, կորցրած վշտահարված, բայց արժանապատվությունը բարձր պահած ԱրՊՇ երևելի դասախօսը:

Շնորհավոր 95-ամյակդ, սիրելի Սօկրատ Աղալարի: Առողջություն, մտքի հստակություն, հաջողությունների շարան և... Տունդարձի անխոչընդոտ ճանապարհ եմ ցանկանում Ձեզ, ամուր և հավատով մնացեք...

Զինաիրա ԲԱԼԱՅԱՆ

Ղարաբաղը վաղուց է մտել պոեզիայի մէջ: Ղարաբաղի հողից ծնված, նրանով շնչող ու թևավորվող շատ երգիչներ իրենց որդիական սերը արտահայտել են բանաստեղծական հիանալի շարքերով, պոեմներով: Ս. Խանյանի «Բո անունից» գրքի «Ղարաբաղյան նվագներ» շարքը գալիս է լրացնելու այդ թեման ինքնատիպությամբ և գույների բազմազանությամբ: Բանաստեղծի համար «Երանգների մի աշխարհ է Ղարաբաղի առավորը» («Առավորը»), թթենին «Չի պահանջում, նվիրում է ու գոհ ծիծուկ արածով, միայն մայրն է ցնծում այդպէս որդիներին տվածով» («Թթենին»), անպը «Ամպ չէ, ճերմակ հարս է, ջուր է տանում արտերին» («Ամպը»), «Արտե-

րը սարից կախված փեշեր են կանաչ-կանաչ» («Արտերը»): Ահա ղարաբաղյան ամառը՝ «Ձորը կանաչ, լանջը դեղին, սարերը ծլած, արտի կեւը արդեն հեղի, կեւը նոր չլած» («Ամառը»): Բերենք մի ուրիշ պատկեր. «Մենք չունենք հորդահու գետեր, անձրևն է մեր հողը սնում, ձորերից բարձրացող անձրևը մեր արտի խորքից է ծնվում» («Անձրևը»)։ Ս. Խանյանի «Բո անունից» և «Կանաչ ծիծուկ» գրքերը վերջին տարիների մեր լեռնաշխարհի գրական օջախում ստեղծված հաջող ժողովածուներից են, որոնք բանաստեղծի ստեղծագործական հասունության և պատասխանատվության զգացումի վկայություններ են, երկու հաճելի նվեր ընթերցողներին:

Գուրգեն ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

ՄԵՐ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԵՐԹԻ ԶԱՀԱԿԻՐԸ

Մեր երթը և՛ հին է, և՛ նոր է, Արմատներ ունենք մեր հողում, Թշնամին արմատներ չունի, Ահա թե ինչն է դողում:
Սրանք Ձեր տողերն են, թանկագին մեր Սօկրատ Խանյան, և՛ երթը, և՛ մեր հողում ունեցած ամուր ու հին արմատները այս սեղմ քառատողում հենց Դուք եք: Միայն այն միտքը, որ Դուք ականատեսն ու վկան եք արցախյան ամենաթեմ իրադարձությունների, և Ձեր՝ բանաստեղծի հոգին ոչ միայն չի փվել, այլև ոգի է հաղորդել շուրջը տառապողներին, ապացույցն է այն բանի, որ հայի այս տեսակը հարատևելու է:
Թե ինչ մտածելով են Ձեր ծառայողները Ձեզ տվել անտիկ մեծագույն մտածողներից մեկի անունը, գոնե ինձ հայտնի չէ: Բայց, որ Աստված Ձեզ ամեն ինչից զատ օժտել է նաև իմաստության մեծ պաշարներով, նշան է այն բանի, որ դեռ երկար եք ապրելու ու սերմանելու եք Ձեր երկար կյանքով ու փորձություններով ամբարածը աննկուն արցախցու մէջ: Երկար կյանք Ձեզ, և որ կատարվի Ձեր ամենամեծ իղձը՝ նորից ապրել ու արարել մեր բոլորիս հոգու մաս Արցախում:

Ալիս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Լայն են և ընդգրկուն Սօկրատ Խանյանի գրական, գիտական, հասարակական, մանկավարժական գործունեության սահմանները: Նրա գործունեությունը սերտորեն կապված է Արցախի վերջին՝ գրեթե մեկդարյա պատմության հետ: Եվ կարելի է ասել, որ նա իր բազմակողմ գործունեությամբ այդ պատմության ոչ միայն անմիջական վկան եղավ, այլև կերտողներից մեկը:

Որքան սթափ և վերլուծող է նրա միտքը գրաքննադատության մէջ, նույնքան խորունկ և քնարական է պոեզիայում: Նրա պոեզիայում Արցախն է՝ իր բնաշխարհով, մարդկանցով, պատմության գեղարվեստով, մարդկային հույզերով, բարության, հավատի ու հույսի սպասումներով: Հայրենիքի հանդէպ սերը, բնաշխարհի եզակի զգացողությունը, բնության մարդու ներաշխարհը բացահայտելն ու նրան մղելը դեպի ազնվություն, ծնողապաշտության, զավակապաշտության, աստվածային սիրո և մարդկային մյուս բարձր արժեքների գեղարվեստական դրսևորումներն ենք տեսնում նրա պոեզիայում: Նրա «Սիրտը նուրբ է» բանաստեղծությունը հումանիզմի, հանդուրժողականության և մարդկային ամենավեհ զգացման՝ սիրո կոչ է՝ ուղղված ընթերցողին, որը ապրումների խոր ենթաշերտեր ու կենսափիլիսոփայություն է ընդգրկում: Պոեզիային զուգահեռ՝ նա գրականագիտական գործերով մշտապես իր խոսքն է ասում ստեղծվող գրական գործերի մասին՝ հետևելով ժամանակակից գրական ընթացքին:

Տեղյանական իմաստությունը կրկնելով՝ կարող ենք բնորոշել Ս. Խանյանին. տաղանդավոր բանաստեղծները զարդարում են գրականությունը, տաղանդավոր մարդիկ՝ կյանքը: Նա՝ որպէս հայ գրականության մեր դասախօս, իր ներդրումն է ունեցել գրականությունը սիրելու և գրականությանը նվիրվելու իմ և շատ սերնդակիցներիս կողմնորոշման մէջ: Ու բազմաթիվ սերունդների համար այսօր էլ նա շարունակում է լինել գրականության դասախօս, Արցախի երգը սրտում ու գրչին բանաստեղծ և լավ Մարդ: Շնորհավորելով մեր դասախօսի՝ ընկեր Խանյանի հորեղանը՝ մարդենք նրան և բոլորիս տունդարձ, կրկին տիրոջ իրավունքով արժանապատիվ վերադարձ հայրենի Արցախ:

Զարինե ՍԱՌԱԶՅԱՆ

ԼՈՒՍԱՌԱՏ ՈՒՂԻ



Դժվար է կյանքն ապրել անձնական ու անանձնական դրամատիկ վայրիվերումների հաղթահարման իմաստնությամբ ու միաժամանակ սիրահարի անհուն տենչանքով երկրպագել արվեստագետի նույնքան ոչ դյուրին ճակատագիրը: Եվ այդ անհաշտ դաշնությունը նա մի սրանչելի ներդաշնակությամբ ամփոփել է մարդկային իր վսեմ նկարագրի ու անկրկնելի արվեստի լուսեղեն հետագծում:

Լինելով իմ հարգարժան դասախոսի՝ բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ Սոկրատ Խանյանի հագարավոր սաներից մեկը, հետագա՝ տասնամյակներ տևող մտերմության ու համագործակցության տիրույթում հենց այսպիսին եմ ճանաչել նրա տիեզերահունչ էությունը:

Հենց պաշտելի Արցախին իր արարումով առավել շատ նվիրվելու փափագի շնչով է երկարել Ս. Խանյանի ստեղծագործական կյանքի միջօրեն: Այստեղ են մեկտեղվել գեղագետն ու իր տողի դիմագիծը՝ միմյանց նոր ավյուն տալու միմյանց ջինջ հայացքը պահելու համար: Այն լեցուն է ոչ միայն պոետիկ, այլև ուշագրավ գրականագիտական և թարգմանչական գործերով:

Հիրավի, նահապետի խորթափանց հայացքն այսօր էլ ջերմությամբ է ընդունում գրական ապարեզի ամեն մի նոր շնորհալի անուն՝ իբրև նշան հայ մշակույթի հարատևության: Սա ևս նոր սերնդին հղած իր խորիմաստ դասերից մեկն է. միմյանց տեսնել ու գնահատել: Հիմա՝ այս անժամանակ ժամանակում, առանց Արցախի, առավել կարևորվում է յուրաքանչյուրի ներկայությունն ու ձայնը՝ իբրև հայրենական: Այսօր Հայրենիք, տունտեղ կորցրած ծերունագարդ պոետի անթացույց իր իսկ բանաստեղծական նոր տողն է, ինչն էլ կօգնի նրան հաղթահարելու հայրենակորստից անանցանելի դարձած հոգու անդունդներն ու վիհերը:

Ժամանակ առաջ ՀՀ գրողների միությունում նշեցինք անվանի արցախցու 95-ամյակը: Նահապետի իր պատգամով ու մեծ հավատով խոստացանք մեկդարյա հորելյանը նշել Արցախում: Իր խոսքին չհավատալու իրավունք չունենք. չէ՞ որ բանաստեղծները նաև մարգարեներ են:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Խանյանը իրեն լավ է զգում, երբ դաշտում է, հողի աշխատավորի մոտ: Բնության գրկում նա կաշկանդված չէ: Գյուղական պատկերները նրան նոր շունչ են տալիս, և ընթերցողի առաջ կանգնում է մի նոր Խանյան, որը և՛ զգում է, և՛ զգացնել տալիս: Բայց ցավով պետք է նշել,

որ այդ թեման ավելի քիչ է արժանացել «Կարկասի» հեղինակի ուշադրությանը, մինչդեռ մեզ թվում է, որ դա պետք է դառնար նրա ստեղծագործությունների լեյտմոտիվը:

Ժան ԱՆԴՐՅԱՆ

Ինձ բախտ է վիճակվել լինել բանաստեղծ, թարգմանիչ, գրականագետ, հրապարակախոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Արցախի պետական համալսարանի դասախոս Սոկրատ Խանյանի ուսանողը, մագիստրոսը, տարիներ անց՝ նաև գործընկերը: Սոկրատ Խանյանից ուսանողական տարիներից սկսած՝ սովորել և այսօր էլ առիթը բաց չեմ թողնում սովորելու կյանքի ու գրականության կարևոր դասերը: Ցանկացած ուսանողական հավաք ընկեր Խանյանի ներկայությամբ վերածվում էր գրական-գեղարվեստական միջոցառման: Հոգևոր աճի մեր ռահվիրան է Սոկրատ Խանյանը. աշխատասիրության, կենսասիրության և փիլիսոփայության մեր թիվ մեկ ուսուցիչը: Չի եղել նոր տպագրված մի գիրք, որը չընթերցեր ու իր ծանրակշիռ կարծիքը չհայտներ Ս. Խանյանը: Ինձ «Սպասում» գեղարվեստական առաջին գրքի առաջաբանի հեղինակն ու առաջին խրախուսողն է եղել Սոկրատ Խանյանը: Տասնյակ գրականագիտական հոդվածների, բանաստեղծական ժողովածուների հեղինակ է: Սոկրատ Խանյանի բանաստեղծություններն ու պոեմներն առանձնանում են ասելիքի անմիջականությամբ: Շնորհավորում եմ Արցախի գրական ընտանիքի Նահապետին՝ Սոկրատ Խանյանին՝ ծննդյան օրվա առթիվ, մաղթում, որ գոնե 100-ամյակը Արցախ աշխարհում նշելու հնարավորություն ունենանք:

Նանար ՍԻՄՈՆՅԱՆ

ծունեքը: Իսկ դա գերնպատակ է, որը երկար ապրելու կարևոր պայման է հանդիսանում:

Ի դեպ, երկարակեցության մասին. ինչքանով տեղյակ եմ, նրանց տոհմում նաև մինչև 120 տարի են ապրել, և ինքը պատրաստվում է գերազանցել այդ ռեկորդը: Խանյանի երջանկահիշատակ կինը՝ տիկին Մարգոն, որ մասնագիտությամբ կենսաբան էր, ասում էր՝ «Սոկրատը հաստատ այդքան կապրի, նրա ականջները միշտ տաք են»: Ասել է թե՛ արյան շրջանառությունը պատանու ռիթմ ունի:

Դժվար է համատեղել գիտական միտքը գեղարվեստական մտածողության հետ: Տրամաբանականն ու զգայականը երբեմն իրար խանգարում են, բայց Խանյանին հաջողվում է այս ամենսալիզմը հաղթահարել: Նա տողի՝ ամենախիսկական իմաստով շինարար է, որովհետև կարողանում է ներդաշնակ հանգեքով իմաստալից քառատողեր ստեղծել: Իսկ այդպիսիք շատ են: Ի ամփոփում, ուզում եմ մեջբերել Սոկրատ Խանյանի հրաշալի մի բանաստեղծության հետևյալ տողերը.

Մարերն ի վեր փարիներս ղեպի սափղեր պլացան,
Գազաթների արևի հետ համբուրվեցին հրացայր,
Հիմա ղեպի ձորերը
խոր վար են հոսում իննթացած:
Աղաչում եմ, փարիներս, մի քիչ դանդաղ իջնիք ցած...

Կիմ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՊՐԵԼ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ
Է ՍՏԵՂԾԱԳՈՐԾԵԼ

Այնպես է ստացվել, որ ես ժամանակին եղել եմ Սոկրատ Խանյանի ուսանողը, Արցախի պետական համալսարանի գրականության և լրագրության բաժնում դասավանդելիս՝ գործընկերը, գրական-ստեղծագործական կյանքում՝ գրչընկերը, իսկ Ստեփանակերտում բնակվելու վերջին 17 տարում՝ հարևանը:

Այս վերջին պարագան կուզենայի հատկապես շեշտել, որովհետև եթե ուզում ես մարդուն լավ ճանաչել, պետք է նաև նրա հարևանությամբ ապրել: Ապշելու բան է Խանյանի աշխատասիրությունը. հաճախ եմ եղել նրանց տանը իր հրավերով կամ իմ նախաձեռնությամբ: Նրա գրասեղանին միշտ ձեռագիր թղթեր են եղել, թող ներվի՝ մի քիչ անփույթ թափված, բայց դա տաղանդավոր մարդու ստույգ հատկանիշ է: Նա կարդում է բոլոր նորահրատարակ գրքերը, անպայման արձագանքում այդ հրատարակություններին որևէ հոդվածի, մեկնության, կարծիքի ձևով: Նրա գրչի տակ բառերը սուկ ինֆորմացիա չեն դառնում, դրանք խորքային բովանդակություն ունեցող գիտական կամ գրական տեքստեր են, որոնք հետագայում դառնում են գիրք կամ բրոշյուր: Քանի՞ գրքի հեղինակ է այսօր Սոկրատ Խանյանը, ինքն էլ չի կարող ստույգ ասել, որովհետև գրական-գիտական ժառանգության ցանկում ներառում է նաև դեռ չգրված-չհրատարակված ժողովա-

Սոկրատ Խանյանի 95-ամյա կյանքը ծաղկուն ճանապարհ է, ստեղծագործական բարձունքների հասնելու կամք և պայքար, որի արդյունքում այն խոսուն նշխարներն են, որոնցով զարդարվել է նրա ստեղծագործական աշխարհը: Նրա պոեզիան հայ դասական գրականության առողջ արմատների վրա հյուսված պոեզիա է, որի հմայքը ավանդականի և նորի ինքնատիպ շաղախն է:

Նրա յուրաքանչյուր ժողովածուն նոր հանդիպում էր ընթերցողի հետ, սրտաբաց ու անկեղծ գրույց, հուզմունք, ապրում, ներշնչանքի նոր աղբյուր: Իսկ այդ աղբյուրը առաջին հերթին հայրենի բնաշխարհն է, նրա երվներանգ գույները, փրփրաբաշ գետերը, դարավոր անտառները, անմոռանալի մանկությունն ու պատանեկան երազանքները, հայրական օջախի կրակը, մոր թխած հացի բույրը, առաջին սիրո շունչները, հայ մարդու ազնիվ ու անմնացորդ հայրենասիրությունը, նրա նվիրվածությունը մարդկային ամենագեղեցիկ բարոյական նորմերին: Բանաստեղծը, մերժելով բանաստեղծության մեջ պաճուճանքներն ու պատկերային բարդացումը, միշտ հարազատ մնաց զգացմունքի բնականությանը՝ չնոռանալով ստեղծագործության բովանդակության ու ձևի ներդաշնակության պահանջը:

Կենսավորձի և խոհերի հարուստ կուտակումներ են նաև Ս. Խանյանի գրականագիտական հոդվածներն ու գրքերը: Ստեղծագործական երկարամյա ճանապարհին նա ընթերցողի սեղանին է դրել բանաստեղծական տասնյակ ժողովածուներ, գրականագիտական աշխատություններ, գրականության, արվեստի արդի հիմնախնդիրները քննարկող բազմաթիվ գիտական հոդվածներ ու գրախոսություններ:

Ակնառու է Ս. Խանյանի հասարակական գործունեությունը: Միշտ էլ եղել է ազատագրական պայքարի առաջին շարքերում՝ արարելով նաև մեր հերոսական գոյամարտն արտացոլող պոեմներ, լեզնեղներ, բալլադներ, դրամատիկական երկեր: Նրա գիտամանկավարժական գործունեությունն անխզելիորեն կապված է Արցախի Պետական համալսարանի հետ: Հատկապես նրա «Արցախյան պատերազմը և հայ պոեզիան», «Պոեզիայի զարգացման միտումներն Արցախում», «Հայ գրականության ուսուցումը բուռնում» և գրականագիտական այլ ժողովածուներ բացահայտում են, որ Ս. Խանյանը Արցախի դրամատիկ ու հերոսական իրադարձությունների հետ կապված մարդկային ցավի ու հերոսականության անմիջական կրողներից է, ինչը պայմանավորել է ոչ միայն նրա ուսումնասիրության թեմատիկ ընտրությունը, այլև գրականագիտական ասելիքի ռճային առանձնահատկությունը:

Այսօր էլ նրա գրիչը չի լռում, ստեղծագործական անսպառ եռանդով է ստեղծագործում սեղանին դնելով իր զգացումների գերխտացումը հանդիսացող ստեղծագործություններ:

Շնորհավոր հորելյանդ, Սոկրատ Աղալարի: Այսօր քո հոգու մորմոքներում էլ հնչում են արցախացա՛վն ու կարոտը: Մեծ է աշխարհ տեսած մարդու հույսն ու հավատը: Աշխարհը պետք է ճանաչի Արցախը և գիտակցի, որ հզոր է մեր պապերի երկիրը, որ կհաղթահարվեն դժվարությունները, եթե քայլ առ քայլ իրականացվեն վերադարձի սպասումներով լեցուն հույսերը: Թող ձեր ստեղծագործական ուղին կյանքի նոր խորհուրդ գտնի ազատագրված Արցախում:

Անահիտ ԱԹԱՅԱՆ



Օրերս գրական մի միջավայրում բանաստեղծություններ ընթերցեցին: Մեկի գործերը հավանեցի: Բարձր ներկայ չէր: Մի քանի օրից ներկայացավ: Նոր բանաստեղծություններ լսեցի: Հավանեցի: Ներկայացնում եմ մեր գրական համայնքը՝ նախապես սաներով, որ հեղինակը՝ Ալբերտ Թաթարյանը, դարձրեցի սեփական է, սովորում է Երևանի թիվ 118 ավագ դպրոցում, 11-րդ դասարանի աշակերտ է: Ազատ արտահայտում է ռուսերենին և անգլերենին, մասնակիորեն՝ գերմաներենին: Ցանկանում է դառնալ միջազգայնագետ:

Բանաստեղծություններ գրում է 2022 թվականից: Ակունքները՝ Տերյան, Չարենց և ինքնուրույն ձայն:

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՂՈՔ

Եկան ու գնացին
Հրեշտակներ սառցե՝
Հայացքներով անտուն ու սրտերով դատարկ,
Եվ ինձ ժառանգեցին
Այս հեռաստանն անսեր,
Եվ այս հեռաստանում ինձ թողեցին մենակ:
Ճերմակ փաթիլներով
Իմ երազները մտղ
Մեկիկ-մեկիկ իջան մայրեզրերին կյանքի,
Չապրած տարիներով
Շտրիակալ եմ Քեզ, Տեր,
Որ ինձ բաժին ընկավ Թագը տառապանքի:
Տերներով ծածկիր
Իմ վիշտը անանուն,
Դիր ճանաչողներ սրտիս, որ չստի երբեք,
Որ ես կրկին գտնեմ
Այս անհաստատ կյանքում
Իմ ցնորքներն անեղծ, որ կորցրի երեկ:
Ա՛ն ինձանից անխոս
Աչքերը իմ պղտոր,
Տնոր ինձ հայելիներ, որ չպիտի ճաքեն,
Ինձ մաքրությունը տուր
Անցավ իմ նախահոր,
Որ ես կրկին դառնամ Քո Տունն ու Մարգարեն:
Մահին պարտվել եմ ես
Ու մնացել եմ ողջ,
Հրեշտակներն ինձ հետ չեն բարձրացրել գավեր,
Տեր իմ հազարատես,
Իմ աղոթքով անխոս
Հալեցրո՛ւ սառցե այս հեռաստանն անսեր:
Մի քիչ հավան ցանիք
Մեր մարդկային սրտում,
Ո՛ւժ տուր բազումներին, որ չընկրկեն երբեք,
Որ մենք մոռեն դառնանք
Այս հարատև ցրտում,
Որ մեր ձեռքով մեզանից հրեշտակներ կերտենք:

ՎԱԴՎԱ ԽԵԼԱԳԱՐԻՆ

Բարով եկար,
Ով խելագար իմ՝ վաղվա,
Ինչ դու կուզես, որ քեզ պատմեմ այս խաղից,
Մինչև հիմա
Չենք հասկացել՝ դեռ որքան
Պիտ դուրս չգանք մեր մամռոտած դագաղից:
Եղած սրտով
Մենք փորձում ենք հավատալ,
Բայց արդեն էլ ոչնչի չենք հավատում:
Մեր ողջ կյանքում
Մենք սովորում ենք ժպտալ,
Մի ողջ կյանք էլ ժպիտներ ենք որոնում:
Արի՛ այսօր
Կյանքի մեր սերը փնտրենք,
Որ որբացած՝ դռներդ ու էլեգերում,
Թե պետք լինի,
Մոռնե մեր սիրտն էլ պատռենք,

Մեր գույնը տանք՝ կտավին այս անանուն:
Արի՛ ծաղրենք
Մեր վազբերը քարացած,
Դարավոյն այս ծուլ պայքարը աննորոյթ,
Կներես մեր
Խենթությունը չափավոր,
Շռայլի մեզ խիզախությունը հոգուդ:
Որքան շատ եմ

Հանճարները այս դարում,
Որոնք միայն ցանկանում են գլխատել,
Անընդհատ մենք
Հին պարերն ենք մեր պարում,
Բայց... վաղուց են երաժշտությունն անջատել:
Բարի՛ գալուստ,
Ով խելագար իմ՝ վաղվա,
Մեր աշխարհը քո ցնորքն էր մրմուն, Դու՝ թիավար,
Բայց քո տեղը... չեն պահի
Առօրյայի անառագաստ նավակում:

ԳԱԼԻՔԻ ՊՈՆՏՆԵՐԻՆ

Թե դողողա երկինքն,
Ու մայր մտնի արև,
Մենք նույն պահին կգանք՝ խավարը պատռելու,
Ու թե կորչենք հանկարծ,
Չկարոտեք, տղերք,
Մենք գնացինք հեռվում արև նկարելու:
Ու թե կորչենք հանկարծ,
Մեր տեղը մի՛ խմեք,
Գտնեք մեզ ձեր գինով լեցուն գավաթներում,
Ու մեր տողերի մեջ
Հավատացեք, տղերք,
Մենք ձեր դողողացող աչքերն ենք նկարում:
Սրտերը ձեր՝ ամբողջ,
Աչքերը՝ արձագանք,
Շուրթերը՝ տողատակ մեր անավարտ երգի,
Ձեր մատների վրա

Գաղտնիքն է դողանջում
Հավերժության սառած օվկիանոսի խորքի:
Ապագայի զինվոր,
Ապագայի պոետ,
Գրիչդ է հաղթության ավետը բերելու,
Հավերժության խորքից
Մենք էլ կգանք քեզ հետ
Միխրե երկինքներում արև նկարելու...

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ

Որքան պիտի նայենք ձեր արձանին անխոս,
Որքան այս սրբազան նինջը պիտի տևի,
Ջարթներ ու հարվածներ, դիցեր մեր հեթանոս,
Նրանց, ով դուր բացեց անգործության դևին:
Որքան պիտի տևի շինծու այս նիրվանան,
Որքան դեռ աղոթենք... լոկ պարտք տալու համար,
Չեն պատկանում նրանց, որ լուռ կձևանան,
Ո՛վ, հեթանոս իմ Դից, եկ ու վախերս տար:
Ո՛վ, հեթանոս իմ Դից, եկ, կասկածներս տար,
Կասկածողները տեղ քո տաճարում չունեն,
Նայիր որքան դարձավ ամբոխդ ապիկար,
Քուրմդ՝ կենցաղամոլ, կիսահավատ ու նենգ:
Ո՛վ, հեթանոս դիցեր, ապավինում եմ ձեզ,
Այրվող մտրակը ձեր մեջքիս կուզեմ զգալ,
Բան չտվեց անգեն, անգործ աղոթքը մեր,
Որ մենք անում էինք մինչև արևագալ:
Եկեք անհրավեր, խուժեք միանգամից,
Թափվեք հեղեղի պես՝ փոշուտ երկրիս վրա,
Մաքրեք իր սիրտը հին կեղտից ու խաշամից,
Օգնեք արևավոր ճախրանքներին նրա:
Ձեր թուրը բարձրացրեք, դիցեր մեր հեթանոս,
Որ ժողովուրդն ամբողջ ձեր ետևից գնա,
Եթե ծնկած պարզես խաղաղության փարոս,
Խաղաղությունը այդ կացնով՝ վզիդ կգա...

Գրական անցուղարձ գրական անցուղարձ

ԼՈՒՅՍՈՎ ՈՒ ԺՊԻՏՆԵՐՈՎ ԼԻ ՄՈՒՅՅԼ, ԱՆՁՐԵՎՈՏ ՕՐԸ

Ապրիլի 25-ին «Ճանաչենք ժամանակակից գրողներին» նախագծի շրջանակներում «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հարկի ներքո հյուրընկալվել էր գրող, բանաստեղծ, հրապարակագիր, արձակագիր, մանկագիր, նկարիչ, բժիշկ-նյարդաբան Նանեն:

Օրը մոայլ էր, անձրևոտ, սակայն ողողված էր կրթահամալիրի Արևմտյան դպրոց-պարտեզի 3.2 դասարանի մանուկների ժպիտներով: Միջոցառման կազմակերպիչն էր գրող-բանաստեղծ Քրիստինե Հովսեփյանը: Երեխաները նախապես ընթերցել էին Նանեի որոշ հեքիաթներ՝ 2024 թվականին Վ.



Անայանի անվան մրցանակի արժանացած «Թևթևիկը» մանկական գրքից, պատրաստել հարցեր գրքի ստեղծման, հեքիաթների հերոսների նկարագրի վերաբերյալ, նրանց հետաքրքիր էր նաև մանրամասներ գրողի գրական ընթացքից, և թե ինչպես են ծնվում հեքիաթները, ապա՝ գիրք դառնում: Հանդիպումը վերածվեց ընթերցող-գրող անկեղծ և ջերմ զրույցի:

Երեխաները շատ ոգևորված էին և իրենց ստեղծագործություններն էին նվեր բերել գրողին. Արևմտյան դպրոցի 5-րդ դասարանի աշակերտներ Ռուբեն Հովսեփյանը կատարեց իր հրաշալի և բավականին հասուն «Ջանգակ» դաշնամուրային ստեղծագործությունը, իսկ Դավիթ Խաչատրյանը ներկայացրեց «Quiz» ծրագրով պատրաստած իր խաղը, որը Նանեի հեքիաթներին էր նվիրված: 3-րդ դասարանցիները «Paint» ծրագրով հեքիաթների թեմաներով նկարներ էին պատրաստել, իսկ 3-րդ դասարանցի Մերի Միքայելյանը՝ իր «Թևթևիկը» կտավը: Նանեն էլ մանուկներին նվիրեց տարիներ առաջ հրատարակած իր մանկական «Լապտերիկ» անագրից և «Թևթևիկը» գրքից մի քանի օրինակ:

Հանդիպման վերջում 4-րդ դասարանցի Սառա Հովսեփյանի ֆլեյտայի կախարհիչ հնչյունների ներքո, գրողի առաջարկ-խնդրանքով, փոքրիկները նկարեցին «Թևթևիկը» հերոսների արևոտ ժպիտները: «Այս ժպիտները ես կտանեմ ինձ հետ և կջերմանամ կյանքի անարև օրերին», - խոստացավ Նանեն:

ՄԱՖ. լրագ.

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԳՄ վարչությունը ցավակցում է արձակագիր, բանաստեղծուհի Մարիա Ավագյանին սիրելի որդու՝ Տիգրան Աֆրիկյանի անժամանակ մահվան կապակցությամբ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մայիսի 7-ին՝ ժամը 14-ին, ՀԳՄ կլոր սրահում տեղի կունենա գրականագետ Ֆելիքս Մելոյանի ծննդյան 85-ամյակին նվիրված հիշատակի ցերեկույթ:
ՀԳՄ

Գրական Թերթ
Գլխավոր խմբագիր՝ Կարինե ԽՈՒՆՎԵՅՆԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Նորայր Ադալյան, Լիլիթ Արզումանյան, Պետրոս Դեմիրճյան, Աելիտա Դոլուխանյան, Ազատ Եղիազարյան, Գորգեն Խանջյան, Մամվել Կոսյան, Էդվարդ Միլիտոնյան, Հրաչյա Մարիբեկյան:
Հրատարակում է «ՀԳՄ ՀԿ «Գրական թերթ» խմբագրություն» ՍՊԸ-ն:
Տպագրվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:
Վ.կայական՝ 02Ա 051126: Գրանցման թիվ՝ 1175:
Ծավալ՝ տպ. 2 մամուլ:
Տպաքանակ՝ 500: Գինը՝ 100 դրամ:
Լույս է տեսնում յուրաքանչյուր ուրբաթ:
Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը ոչ միշտ է համակարգիչի հեղինակների արտահայտած տեսակետներին: Արտահայտության դեպքում հղումը «Գրական թերթին» պարտադիր է: Տպագրությունն իրականացրել է «Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ-ն՝ ՀԳՄ «Լ. Զ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ» փոպարարանը:
0019 Երևան 19, Մալաթյա Բաղրամյան պող. 3, էլ. փոստ՝ grakantert@gmail.com